# ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

15.06.2015 14:29

Հարգելի' փաստաբաններ,

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչությունը առցանց ուսուցման հարթակում ներկայացնում է հետևյալ թեմաները՝

**1. Մինչդատական կալանքի թույլտվության վերաբերյալ դատական ակտերի առարկան և չափորոշիչները.**

Հաշվարկվում է պարտադիր վերապատրաստման 2 ժամ: Դասընթացը վարում է իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դասախոս Դավիթ Խաչատուրյանը:

**2. Ապացույցներ.**

Թեման ներկայացվում է երեք մասերով, հաշվարկվում է պարտադիր վերապատրաստման հետևյալ ժամաքանակը. մաս առաջին՝ 2 ժամ, մաս երկրորդ՝ 3 ժամ և մաս երրորդ՝ 2 ժամ: Դասընթացը վարում է փաստաբան Հայկ Ալումյանը:

**3. Պաշտպանական ռազմավարության և մարտավարության մշակում.**

Հաշվարկվում է պարտադիր վերապատրաստման 2 ժամ: Դասընթացը վարում է փաստաբան Հայկ Ալումյանը:

**4. Պաշտպանը մինչդատական վարույթում.**

Հաշվարկվում է պարտադիր վերապատրաստման 3 ժամ: Դասընթացը վարում է փաստաբան Հայկ Ալումյանը:

Առցանց ուսուցման հարթակի հասցեն՝ **olp.abaceeli.am:**

*Հիշեցում՝ առցանց ուսուցման հարթակում յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում հաշվարկվում է առավելագույնը 4 պարտադիր վերապատրաստման ժամ, իսկ տարեկան՝ 8:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })